ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ՀՈՒԼԻՍԻ 2024թվականի N 108-Ա

ԱՐԵՆԻԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ-Ը ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ԵՎ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 26.06.2024ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 087-Ա և 06.06.2024ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 077-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջով, Արենի համայնքի ավագանին *որոշում է՝*

1. Արենիի մանկապարտեզ ՀՈԱԿ-ը անվանակոչել բարերար Լիսա Գրիգորյանի անունով:

2. Արենի համայնքի ավագանու 26.06.2024թվականի <<Արենի համայնքում <<Արենիի մանկապարտեզ>> ՀՈԱԿ հիմնադրելու, ՀՈԱԿ-ի կանոնադրությունը և հաստիքացուցակը հաստատելու մասին>> թիվ 077-Լ որոշման մեջ կատարել լրացումներ՝ որոշման բոլոր մասերում և հավելվածներում <<Արենիի մանկապարտեզ>> բառերից առաջ ավելացնել <<Լիսա Գրիգորյանի անվան>> բառերը:

3. Արենի համայնքի ավագանու 26.06.2024թվականի <<Արենի համայնքի կարիքների համար գնված մեկ միավոր աղբատար մեքենան համայնքի հաշվեկշռում ավելացնելու և Արենի ՀՈԱԿ-ին անհատույց օգտագործման իրավունքով հատկացնելու մասին>> թիվ 087-Ա որոշման մեջ կատարել լրացում. որոշման տեքստի 2-րդ մասի մեջ <<անհատույց>> բառից հետո ավելացնել <<անժամկետ>> բառը:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ